


Մաթեմատիկա 6-րդ դասարան
Մարզային փուլ 2023
Տևողությունը 150 րոպե (2,5 ժամ)

- Հետևյալ թվերից քանի՞սն են պարզ. 111; 1001; 1010101:
1) 1-ը 2) 2-ը 3) 3-ը 4) ոչ մեկը
 - 10 սմ կողմով քառակուսին բաժանված է 100 հատ 1 սմ կողմով քառակուսիների նկարում պատկերված ձևով: Գնել ներկված պատկերի մակերեսը:
1) 62 2) 27 3) 31 4) 32
- 
- Արմենը և Արմանը միասին կշռում են 50 կգ, Արմանը և Արամը՝ 70 կգ, Արմենը և Արամը՝ 60 կգ: Արմանի զանգվածը քանի՞ %-ով է տարբերվում Արամի զանգվածից:
1) փոքր է 25%-ով 2) մեծ է 25%-ով 3) մեծ է $33\frac{1}{3}$ %-ով 4) փոքր է $33\frac{1}{3}$ %-ով
 - Քանի՞ եռանիշ թիվ գոյություն ունի, որոնց թվանշաններից ուղիղ երկուսն են կրկնվող:
1) 279 2) 243 3) 252 4) այլ պատասխան
 - Կոտորակի համարիչը մեծացրել են 24%-ով: Քանի՞ տոկոսով պետք է փոքրացնել այդ կոտորակի հայտարարը, որպեսզի կոտորակի արժեքը մեծանա 4 անգամ:
1) 69%-ով 2) 31%-ով 3) 76%-ով 4) 24%-ով
 - Ինչ-որ տարվա հունվար ամսին եղել է ճիշտ 4 երկուշաբթի և ճիշտ 4 ուրբաթ: Շաբաթվա ի՞նչ օր է եղել այդ տարվա հունվարի 20-ը:
1) կիրակի 2) շաբաթ 3) երկուշաբթի 4) չորեքշաբթի
 - 2023-ը ներկայացրել են 2022 բնական արտադրիչների արտադրյալի տեսքով, որտեղ արտադրիչներից ոչ մեկը ո՛չ եռանիշ է, ո՛չ էլ քառանիշ: Գտնել այդ արտադրիչների գումարը:
1) 2060 2) 2059 3) 2061 4) 2022
 - Կինոթատրոնի տոմսավաճառը, վաճառելով կինոթատրոնի առաջին շաբթի բոլոր տոմսերը նկատեց, որ նրանցից մեկը վաճառել է 2 անգամ: Ո՞ր համարի տոմսն էր նա վաճառել կրկնակի անգամ, եթե վաճառված տոմսերի համարների գումարը 857 է, իսկ համարակալումը սկսվում է 1-ից:
1) 38-րդ 2) 37-րդ 3) 36-րդ 4) այլ պատասխան
 - Հեծանվորդը «Մաթեմատիկա» քաղաքից դեպի «Գիտություն» քաղաք մեկնելիս՝ յուրաքանչյուր մեկ կիլոմետրի վրա նկատեց, որ ցուցանակի երկու կողմերում գրված թվերի թվանշանների գումարը 13 է (ցուցանակի երկու կողմերից մեկում գրված էր մինչև «Գիտություն» քաղաք մնացած հեռավորությունը, մյուս կողմում՝ մինչև «Մաթեմատիկա» քաղաք մնացած հեռավորությունը): Գտնել նշված քաղաքների հեռավորությունը:
1) 29 2) 19 3) 39 4) 49

10. 2023 թվերի միջին թվաբանականը 3 է: Այդ թվերից որոշները մեծացրին 3-ով: Արդյունքում միջին թվաբանականը դարձավ 6: Քանի՞ թիվ մեծացրին:
- 1) 600 2) 2022 3) 2023 4) այլ պատասխան
11. Քանի՞ բաժանարար ունի 40-ից մեծ 50-ից փոքր պարզ թվերի արտադրյալը:
12. 17 նապաստակներ վանդակներում պետք է տեղավորել այնպես, որ յուրաքանչյուր վանդակում լինեն տարբեր քանակությամբ նապաստակներ: Ամենաշատը քանի՞ վանդակների դեպքում է դա հնարավոր, ընդ որում բոլոր վանդակներում պետք է լինի գոնե մեկ նապաստակ:
13. Մաթեմատիկայի ուսուցիչը, մտապահելով որևէ երկնիշ թիվ, իր աշակերտներին առաջադրեց հետևյալ խնդիրը.
Մտապահված թվի վերջին թվանշանը 5 է կամ այն բաժանվում է 7-ի: Կա՛մ մտապահված թիվը մեծ է 20-ից, կա՛մ նրա վերջին թվանշանը 9 է: Կա՛մ մտապահված թիվը բաժանվում է 12-ի, կա՛մ այն փոքր է 21-ից: Գտեք ուսուցչի մտապահած երկնիշ թիվը, եթե նրա ասած բոլոր մտքերը ճիշտ են:
14. Գրատախտակին հերթականությամբ գրված են 1; 2; 3;; 999; 1000 բնական թվերը: Նարինեն այդ նույն թվերը գրեց մեկ այլ հերթականությամբ: Սկզբում աճման հերթականությամբ նա գրեց այն թվերը, որոնց թվանշանների գումարը 1 է, այնուհետև աճման հերթականությամբ գրեց այն թվերը, որոնց թվանշանների գումարը 2 է, 3 է և այլն (ստացվեց՝ 1; 10; 100; 1000; 2; 11; 20; 101; 110; 200; 3; 12; 21; 30; 102; 111;): Նարինեն որերո՞րդ տեղում գրեց 799 թիվը:
15. Տոնածառի լույսերի շղթան պատրաստված է հերթականությամբ դասավորված 150 դեղին և կապույտ լամպերից: Ընդ որում ցանկացած հերթականությամբ գտնվող 3 լամպերի մեջ գոնե մեկը կապույտ է: Երբ Վարդանի հայրիկը կապույտ լամպերից որոշները փոխարինեց դեղին լամպերով, Վարդանը նկատեց, որ ցանկացած հերթականությամբ գտնվող 4 լամպերի մեջ կապույտ լամպերի քանակը մեկից ոչ ավել հաստ է: Ամենաքիչը քանի՞ կապույտ լամպ փոխեց Վարդանի հայրիկը: